ԱՐՏԱՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պորտ-Արտուրի վիճակը:

Պատերազմի դաշտում բոլորի ուշադրութիւնը այժմ կենտրոնացած է Պորտ-Արտուրի վրայ: Երկու կռուող բանակները, ինչպէս և ամբողջ աշխարհը, Պորտ-Արտուրի անկման հետ կապում են պատերազմի ապագայ ընթացքեան այս կամ այն կողմ թեքուելու հարցը: Ճապոնացիները աշխատում էին գրաւել Պորտ-Արտուրի շուրջը գտնուող այն ամրութիւնները, որոնցից նրանք կարող լինէին ամբակոծել Պորտ-Արտուրում մնացած ռազմանաւերը: Այդ նաւատորմի ընդունայն Տոգօն կարող էր իր ամբողջ ծովային ոյժը կենտրոնացնել Բալտիկեան նաւատորմի դէմ: Եւ ճապոնացիներին աջողուեց մեծ զոհաբերութիւններով տիրել հռչակաւոր 203 մետր բարձրութիւն ունեցող ֆորտը, չնայած ռուսների դիմադրական բոլոր ոյժերին: Այդ դիրքից ճապոնացիները մեկը միւսի յետևից ոչնչացրին ռուսական ռազմանաւերը Պորտ-Արտուրի նաւահանգստում: Մնացել էր „Севастополъ“-ը, որի դէմ Տոգօն ուղարկեց իր ականանաւերը: Վնասուած է համարեա և այդ զրահակիրը: Այդպիսով ճապոնական նաւատորմիղը կարող է այսուհետև ինկատի ունենալ միմիայն բալտիական էսկադրան, որին իբրև օժանդակ, ասում են, պէտք է ուղարկուի 3-րդ էսկադրան:

Ռուսաց երկրորդ էսկադրային ևրոպական պետութիւնների և անգլիական ածխավաճառների կողմից ցոյց տուած աջակցութիւնը մեծ զայրոյթ է պատճառել Ճապոնիայում: «Չէզոքութեան» այդ կերպ ըմբռնումը շատ բնորոշ է մերկանտիլ Եւրոպայի հոգեբանութիւնը հասկանալու տեսակէտից: Շահի համար ամեն ինչ վաճառող ևրոպացիների համար մորալ մոտիւները միշտ բռնում են վերջին տեղը: Էլ ինչու զարմանալ Ֆրանսիայի և Գերմանիայի կողմից «չէզոքութեան» խախտումների վրայ, երբ նոյնը անում է Ճապոնիայի դաշնակից պետութիւնը, թոյլ տալով իր կապիտալիստներին՝ օգտուելու շահաւէտ առևտրից...

Առևտրի բան է, իսկ առևտրական շահն է Ջոն-Բուլի բոլոր գործողութիւնների շարժառիթը։ Մենք տեսանք անցեալ անգամ թէ ինչպէս այդ շահին զոհ են բերուել և Թիւրքիայի քրիստոնեաները...

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«**Աւետիք**», մասնաւոյց է անում «Տաւորիճակ մրցում մը, զոր յոյն և հրեայ աղջիկներ կը մղեն հայ աղջիկներու դէմ՝ անոնց ձեռքէն խլելու համար հայ փեսացուներ»։ Եթէ այս տեսակ սիրային ոգիսականների մէջ սակայն օտարուհիները են որ յաջողութեան մրցանակը խլում են, թերթի կարծիքով պատճառն այն է, որ հայ աղջիկները նուազ ճարպար են ամուսին ճարելու մէջ, քան յոյն և հրեայ աղջիկները, որոնց բովանդակ շնորհը կայանում է միայն հրապոյր տղոյնն մէջ և որոնց ճարպարութիւնը սակայն շատ անգամ զղջումի և յուսախաբութեան տեղիք է տալիս և աղիտաբեր հետեանքներ ունենում հայ երիտասարդների համար։

Նոյն թերթը՝ ասանց կողմից արտայայտուած փափաքի հակառակ՝ ասելօրդ է համարում Մայրավանքի յաւերտուած Սիսի մէջ, երբ արդէն իսկ բաւականիներից ասելի թիւ են կազմում երեսադէմի և Ընծաշի վանքերի արտադրած երիտասարդ կուսակրօնները։ Լաւագոյն է դանում որ Պիլիկեան Ծաւանգաւորացը վերածուի մի օդտակար հաստատութեան, օրինակի համար՝ երկրագործական վարժարանի կամ Ընհետասանոցի, որոնց այնքան պէտք ունին Սսեցիք։

—

«Բիւզանդիոն»-ը նոյնպէս համակիր է երեսում նոյն մտքին և բացէ ի բաց հակառակում է Սիսի մէջ Ընծաշի նման Դպրեվանք կամ Ծաւանգաւորաց վարժարան բանալու զաղափարին։

—

«Գեղունի», 1904 թ. թիւ 1—10։ Վենետիկի Մխիթարեանների այդ պատկառազդ «հայաթերթը» իր աչքի ընկնող չբեղուխեամբ կարող է մրցել նոյնանման եւրոպական ամենաընտիր հրատարակութիւնների հետ. թուղթը, տպագրութիւնը, պատկերների ներքուիթիւնը գերազանց են։ Գժբախտաբար նոյնը չենք կարող ասել բովանդակութեան մասին, որ չափազանց տգրատ է և մակաղմանի։ Ինչպէս երեսում է, որոշ սխսեմ, ծրագիր, նիւթերի ընտրութիւն չունի խմբագրութիւնը, որի գրական-գեղարուեստական ճաշակն էլ հեռու չէ գնացել կեղծ-կլասիկական և վկայարանական ազդեցութիւններից... Խիստ ընտրութիւն և սխսեմ չի երեսում և պատկերների մէջ։ Եթէ «Գեղունին» լինէր լոկ չբեղ պատկերների մի «ալբոմ»—հասկանալի կը լինէին հանդիսի բովանդակութեան հետ չկապուած պատահական պատկերները. այդ դէպքում ինչո՞ւ չասլ հանդիսի փոխարէն միայն ալբոմ... Դպիրներն էլ բաւական էժանագին են Վենետիկում. «բանաստեղծներ», որոնք արտադրել են մի երկու կտակածելի յաջողութիւն ունեցող ստանաւորներ՝ արժանացել են «Գեղունիի» անմահների ցանկին և բաշխել են նրա էջերում... Ինչո՞ւ չասլ նաև «Գեղունի»-ի